




ԻՆՉՊԵՍ ՀԱՍԿԱՆԱԼ ԱՇԱԿԵՐՏԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՑԸ
Կալիֆորնիայում անգլերեն լեզվի տիրապետման գնահատում (ELPAC)

2017–18 ԱՍՓՈՓԻՉ ELPAC



Այս ուղեցույցը բացատրում է ձեր երեխայի ELPAC-ի գնահատման զեկույցը: Խնդրում ենք խոսել ձեր երեխայի ուսուցչի (ուսուցիչների) հետ, եթե ունեք լրացուցիչ հարցեր:

Հաղորդագրություն պետական վերակազմի Թոմ Թորլեքսոնի կողմից

Այս զեկույցը ցույց է տալիս ձեր երեխայի ELPAC արդյունքները, այսինքն անգլերենի տիրապետման գնահատման նոր ձևավորված պետական թեստի արդյունքները: ELPAC-ը տեղեկություն է հաղորդում ձեր երեխայի անգլերեն լեզվի տիրապետման տարեկան առաջընթացի մասին: Քանի որ ELPAC-ը գնահատում է ըստ անգլերեն լեզվի զարգացման նոր չափորոշիչների, ձեր երեխայի ELPAC արդյունքները չպետք է համեմատվեն Կալիֆորնիայի անգլերեն լեզվի զարգացման նախորդ թեստի (CELDT) արդյունքների հետ:

Ի՞նչ է միավորի զեկույցը ներառում

- 1 **Ձեր երեխայի անունը և թեստի մասին տեղեկություն**
Ձեր երեխայի անունը, դասարանը և թեստավորման տարին ներառված են զեկույցում:
- 2 **Ընդհանուր միավորը և կատարողական մակարդակը**
Ձեր երեխայի ընդհանուր միավորը և կատարողական մակարդակը ներառված են զեկույցում: Մրանց հաջորդում է անգլերեն լեզվի օգտագործման հմտությունների կարճ նկարագիր, որը բնորոշ է տվյալ մակարդակի երեխաներին: Այս թեստն ունի չորս կատարողական մակարդակ: ELPAC մակարդակների մասին ավելի շատ տեղեկատվություն առկա է այս ուղեցույցի երկրորդ էջում:
- 3 **Ընդհանուր միավորի և կատարողական մակարդակի աղյուսակ**
Այս աղյուսակը ցույց է տալիս ձեր երեխայի ընդհանուր միավորի դիրքը:
- 4 **Ընդհանուր միավորի պատմություն**
Ձեր երեխան առաջին անգամն է հանձնում ELPAC-ը: Եթե ձեր երեխան մյուս տարի նորից հանձնի թեստը, հաջորդ տարվա զեկույցի այս մասում կերևան նաև այս տարվա միավորները:
- 5 **Բանավոր և գրավոր խոսքի գնահատման միավորների աղյուսակներ**
Ձեր երեխայի ընդհանուր միավորը երկու այլ միավորների գումարն է՝ բանավոր խոսքի միավոր (լսելը և խոսելը) և գրավոր խոսքի միավոր (կարդալը և գրելը): Այս աղյուսակները ցույց են տալիս ձեր երեխայի բանավոր և գրավոր խոսքի միավորը և կատարողական մակարդակը: Ինչքան բարձրանա ձեր երեխայի անգլերեն լեզվի տիրապետման մակարդակը, այնքան միավորը կտեղափոխվի դեպի աղյուսակի աջ կողմ:
- 6 **Լսելու, խոսելու, գրելու և կարդալու արդյունքների աղյուսակներ**
Թեստը գնահատում է անգլերեն լեզվի հմտությունները չորս ոլորտներում: Դրանք են՝ լսելը, խոսելը, կարդալը և գրելը: Ձեր երեխայի մակարդակը յուրաքանչյուր ոլորտում ցույց է տրված երեք կատեգորիաներից մեկում ստուգման նշանով (✓)՝ «Սկսնակ», «Որոշ չափով/Չափավոր զարգացած» կամ «Լավ զարգացած»: Այս տեղեկությունը շատ օգտակար է մատնանշելու համար, թե որ հմտություններն են ձեր երեխայի մոտ լավ զարգացած կամ որ հմտությունները բարելավման կարիք ունեն (Սկսնակ կամ Որոշ չափով/Չափավոր զարգացած):
- 7 **Ծանուցումներ որոշ աշակերտների համար**
Որոշ աշակերտներ հանձնում են ELPAC-ի այլընտրանքային տարբերակը: Կարող է նաև լինել անհամապատասխանություն ELPAC-ի անցկացման ժամանակ: Մրանցից որևէ մեկը վերաբերի ձեր երեխային, ապա այստեղ ծանուցում կհայտնվի: Լրացուցիչ տեղեկության համար կապվեք ձեր երեխայի դպրոցի հետ:

Հետևյալ տեղեկությունը հայտնվում է աշակերտի միավորի զեկույցի ետևի կողմում: Այն ավելի շատ տեղեկություն է հաղորդում թեստի և ձեր երեխայի միավորների մասին:

Ի՞նչ է ELPAC-ը

Կալիֆորնիայում Անգլերեն լեզվի տիրապետման գնահատումը (ELPAC) ամփոփիչ գնահատում է, որը ցույց է տալիս աշակերտի առաջընթացը ըստ Կալիֆորնիայի անգլերեն լեզվի զարգացման չափորոշիչների (ELD չափորոշիչներ), որոնք նկարագրում են աշակերտին դպրոցում հաջողություն ունենալու համար անհրաժեշտ անգլերեն լեզվի հմտությունները:





ELPAC ամփոփիչ գնահատումը.

- Ամեն գարուն տրվում է այն աշակերտներին, ովքեր համարվում են Անգլերեն սովորողներ
- Ներառում է լսելուն, խոսելուն, կարդալուն և գրելուն վերաբերող հարցեր

Ձեր երեխայի ELPAC արդյունքները.

- Անգլերեն լեզվի տիրապետման գնահատական են, որոնք պետք է դիտարկվեն այլ հասանելի տեղեկատվության հետ մեկտեղ, ինչպես օրինակ դասարանային թեստերը, հանձնարարությունները և գնահատականները,
- Կարող են օգտագործվել ձեր երեխայի ուսուցչի հետ անգլերեն լեզվի զարգացման առաջընթացի մասին խոսելիս,
- Կարող են օգտագործվել որոշելու համար, թե արդյոք աշակերտը պատրաստ է վերադասակարգվելու որպես անգլերեն լեզվի վարժ տիրապետող (RFEP)

Ներքևի աղյուսակում ցուցադրված չորս ELPAC մակարդակները նկարագրում են, թե յուրաքանչյուր տիրապետման մակարդակի աշակերտները սովորաբար ինչ հմտություններ ունեն անգլերենից:

ELPAC մակարդակ	ELPAC տրամաչափ	Ի՞նչ հմտություններ ունեն սովորաբար յուրաքանչյուր մակարդակի աշակերտները անգլերենից
ՄԱԿԱՐԴԱԿ 4		Այս մակարդակի աշակերտների անգլերեն լեզվի հմտությունները լավ զարգացած են: <ul style="list-style-type: none"> • Նրանք սովորաբար կարող են օգտագործել անգլերեն լեզուն դպրոցում նոր բաներ սովորելու և սոցիալական իրավիճակներում հաղորդակցվելու համար: • Նրանց երբեմն օգնություն պետք կգա անգլերենն օգտագործելիս:
ՄԱԿԱՐԴԱԿ 3		Այս մակարդակի աշակերտների անգլերեն լեզվի հմտությունները չափավոր զարգացած են: <ul style="list-style-type: none"> • Նրանք երբեմն կարող են օգտագործել անգլերեն լեզուն դպրոցում նոր բաներ սովորելու և սոցիալական իրավիճակներում հաղորդակցվելու համար: • Նրանց կարող է օգնություն պետք գալ անգլերենն ոչ այնքան ծանոթ դպրոցական թեմաներում և սոցիալական իրավիճակներում օգտագործելիս:
ՄԱԿԱՐԴԱԿ 2		Այս մակարդակի աշակերտները ունեն անգլերեն լեզվի ինչ-որ չափով զարգացած հմտություններ <ul style="list-style-type: none"> • Նրանց սովորաբար պետք է օգնություն անգլերենը դպրոցում նոր բաներ սովորելիս օգտագործելու և սոցիալական իրավիճակներում հաղորդակցվելու համար: • Նրանք սովորաբար կարող են օգտագործել անգլերենը պարզ հաղորդակցման համար:
ՄԱԿԱՐԴԱԿ 1		Այս մակարդակի աշակերտները անգլերեն լեզվի հմտությունների զարգացման սկսնակ մակարդակում են: <ul style="list-style-type: none"> • Նրանց սովորաբար պետք է զգալի օգնություն անգլերենով դպրոցական առարկաներ սովորելու և սոցիալական իրավիճակներում հաղորդակցվելու համար: • Նրանք կարող են իմանալ որոշ անգլերեն բառեր և արտահայտություններ:

Ներքևի աղյուսակը ցույց է տալիս, թե ինչ կապ ունեն չորս ELPAC մակարդակները ELD չափորոշիչներում նկարագրված տիրապետման երեք մակարդակների հետ:

ELPAC մակարդակներ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Մակարդակ 4
ELD չափորոշիչներ Տիրապետման մակարդակներ	Նախնական — Պահանջվում է զգալի լեզվաբանական աջակցություն	Ընդլայնվող — Պահանջվում է չափավոր լեզվաբանական աջակցություն	Առաջադեմ — Պահանջվում է թեթևակի լեզվաբանական աջակցություն	

Ինչպե՞ս կարող եմ օգնել իմ երեխային:

- Կարդացեք ձեր երեխայի համար կամ թող երեխան կարդա ձեզ համար կանոնավոր կերպով:
- Օգտագործեք նկարներ և հարցրեք ձեր երեխային, թե ինչ է նա տեսնում նկարում, ինչ է տեղի ունենում նկարում:
- Հնարավորություններ ստեղծեք, որ ձեր երեխան լեզուն օգտագործի դպրոցից դուրս:
- Խոսեք ձեր երեխայի ուսուցչի հետ լսելու, խոսելու, կարդալու և գրելու հմտությունների մասին, որպեսզի օժանդակեք ձեր երեխայի առաջընթացին:

Որտեղի՞ց կարող եմ ստանալ ավելի շատ տեղեկատվություն:

Այս գնահատման մասին ավելի շատ տեղեկություն ստանալու համար այցելեք Կալիֆորնիայի կրթության վարչության ELPAC-ի վեբկայքը. <https://www.cde.ca.gov/ta/tg/ep/>:

Փորձական թեստերը օրինակներով հասանելի են հետևյալ վեբ էջում.

<https://www.elpac.org/resources/practicetests/>: